Հաստատում եմ

Նաիրի համայնքի ղեկավար

_____ Ն. Սարգսյան

«08» ապրիլ 2024թ.

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

«ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-24/2»

1. Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը. Նաիրիի համայնքապետարան, Հայաստանի Հանրապետություն, ք. Եղվարդ, Երևանյան 1:

2. Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը. Գնման առարկա է հանդիսանում Նաիրի համայնքի կարիքների համար փողոցների ողոցած ասֆալտով խճապատման աշխատանքների ձեռքբերումը: Գնման գործընթացն իրականացվել է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն:

3. Հրավերը և դրանում կատարված փոփոխությունները. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 06-ի թիվ 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան կազմվել է հրավեր, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 22-ին կայացած նիստում: Հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

4. Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները. Գնման վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, պարզաբանումներ չեն ներկայացվել:

5. Հայտ ներկայացրած մասնակցի տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները.
«ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-24/2» ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացվել է թվով մեկ հայտ՝

Հ/հ	Հայտ ներկայացրած մասնակցի		
	անվանումը	էլեկտրոնային փոստի հասցեն	Տ/Փ-ի ստացականի հ/հ
1	«Լիլիթ-87» ՍՊԸ	lilit87_95@rambler.ru հեռ. 093-50-08-01	000238215

6. Հայտով ներկայացված գները.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը (ՀՀ դրամ), ընդ որում՝		
		Արժեք(ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 Նաիրի համայնքի կարիքների համար փողոցների ողոցած ասֆալտով խճապատում				
1	«Լիլիթ-87» ՍՊԸ	105 000 000	21 000 000	126 000 000

7. Հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները. Հայտերը գնահատվել են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և հրավերով սահմանված կարգով, և գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի մարտի 25-ի թիվ 2 որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվել.

-N 1 չափաբաժնի մասով «Լիլիթ-87» ՍՊԸ –ն:

8. Հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը. «ԿՄՆՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/2» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտեր չեն մերժել:

9. Պայմանագիրը, իսկ գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

Չափաբաժին 1

2024 թվականի ապրիլի 8-ին Պատվիրատու՝ Նաիրիի համայնքապետարանի, որը գտնվում է ք. Եղվարդ, Երևանյան 1 հասցեում, և Կապալառու՝ «Լիլիթ-87» ՍՊԸ -ի, որը գտնվում է գ. Զովունի1-ին փողոց N127 հասցեում, միջև կնքվել է Նաիրի համայնքի կարիքների փողոցների ողոցած ասֆալտով խճապատման աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր N «ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-24/2»: Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 126 000 000 (մեկ հարյուր քսանվեց միլիոն) ՀՀ դրամ:

10. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

11. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները. Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Վ. Վիրաբյան

(Կազմվել է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն)